# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 13.08.2008 (տասներեք կետ զրո ութ կետ երկու հազար ութ) թվականին կնքված թիվ 6615 (վեց հազար վեց հարյուր տասնհինգ) տարածքի ենթավարձակալության պայմանագրի փոփոխության մասին

**Հայաստանի Հանրապետություն**
**ք. Երևան** քսանը սեպտեմբերի երկու հազար տասնութ թվական

**«Էրեբունի Պլազա»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, իրավական հասցեն՝ Հայաստան, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 26/1 (քսանվեց կոտորակ մեկ) շենք, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 286.110.05857 (երկու հարյուր ութսունվեց կետ հարյուր տաս կետ զրո հինգ ութ հարյուր հիսունյոթ), պետական ռեգիստրի վկայական՝ 03 Ա 070030 (զրո երեք Ա զրո յոթ զրո զրո երեք զրո), այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս ընկերության լիազորված անձ Վահրամ Գուրգենի Մարտիրոսյանի (ծնված՝ 25.08.1983 /քսանհինգ կետ զրո ութ կետ հազար հազար ինը հարյուր ութսուներեք/ թվականին, նույնականացման քարտ՝ 001256049, տրված 054-ի /զրո հիսունչորս/ կողմից 09.04.2014 /զրո ինը կետ զրո չորս կետ երկու հազար տասնչորս/ թվականին, բնակության հասցե՝ ք. Երևան, Մազմանյան 18 /տասնութ/ շենք, բն. 18 /տասնութ/), որն ունի սույն գործողությունների համար բոլոր իրավասությունները, մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի վարչության իրավահաջորդ) հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 4 (չորս), պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 286.184.1024607 (երկու հարյուր ութսունվեց կետ հարյուր ութսունչորս կետ մեկ զրո երկու չորս վեց զրո յոթ), գրանցման ամսաթիվը՝ 26.06.2018 (քսանվեց կետ զրո վեց կետ երկու հազար տասնութ) թվանական, այսուհետ՝ «Ենթավարձակալ», ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Անի Օբոսյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա և որի անունից՝ համաձայն 20.09.2018 /քսանը սեպտեմբերի երկու հազար տասնութ/ թվականին տրված լիազորագրի, հանդես է գալիս լիազորված անձ Հրաչյա Մուշեղի Օհանյանը (նույնականացման քարտ՝ 000006197, տրված 22.06.2012 /քսաներկուսը հունիսի երկու հազար տասներկու/ թվականին 010-ի /զրո տաս/ կողմից, բնակության վայրը՝ ք. Երևան, Նորք-Մարաշ 4-րդ /չորրորդ/ փողոց, 13 /տասներեք/ տուն) մյուս կողմից՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 23.08.2018 /քսաներեքը օգոստոսի երկու հազար տասնութ/ թվականի թիվ 940-Ա /ինը հարյուր քառասուն/ որոշումը և 13.08.2008 (տասներեք կետ զրո ութ կետ երկու հազար ութ) թվականին կնքված թիվ 6615 (վեց հազար վեց հարյուր տասնհինգ) տարածքի ենթավարձակալության պայմանագրի 16.3 և 16.4 կետերը, կնքեցին սույն համաձանագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշում են փոփոխել միմյանց միջև 13.08.2008 (տասներեք կետ զրո ութ կետ երկու հազար ութ) թվականին կնքված և Արաբկիր նոտարական տարածքի նոտար՝ Ս. Դանիելյանի կողմից սեղանամատյանի թիվ 6615 (վեց հազար վեց հարյուր տասնհինգ) «Տարածքի ենթավարձակալության պայմանագրի» 16.1 (տասնվեց կետ մեկ) ենթակետը և այն խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝

«16.1. Սույն պայմանագիրը գործում է մինչև 13.08.2023 (տասներեք կետ զրո ութ կետ երկու հազար քսաներեք) թվականը ժամկետով»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Վարձատուն երաշխավորում է, որ Շինությունը վաճառված կամ գրավ դրված չէ, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատում է նաև Կադաստրի կողմից 05.09.2018 (զրո հինգ կետ զրո ինը կետ երկու հազար տասնութ) թվականին տրված N ՄՏ-05092018-01-0446 սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքով:

2.2 Միաժամանակ, ղեկավարվելով ՀՀ գործող քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետով՝ Կողմերը սահմանում են, որ սույն համաձայնագրի պայմանները ենթավարձակալական հարաբերությունների նկատմամբ կիրառվում է 14.08.2018 (տասնչորս կետ զրո ութ կետ երկու հազար տասնութ) թվականից սկսված:

2.3 Սույն Համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև 13.08.2008 (տասներեք կետ զրո ութ կետ երկու հազար ութ) թվականին կնքված թիվ 6615 (վեց հազար վեց հարյուր տասնհինգ) տարածքի ենթավարձակալության պայմանագրի անբաժանելի մասը և ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.4 Միաժամանակ, Կողմերը համաձայնվում են, որ Համաձայնագրի նոտարական վավերացման և դրա պետական գրանցման ծախսերը հոգում է Ենթավարձակալը:

2.5 Համաձայնագիրը կազմված է երկու էջից, հայերեն լեզվով, հավասարազոր չորս օրինակից, որոնցից մեկ օրինակ տրվում է Վարձատուին, երկու օրինակ՝ Ենթավարձակալին և մեկ օրինակ Համաձայնագիրը վավերացրած նոտարին:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Վարձատու | Ենթավարձակալ |
|---|---|
| **«Էրեբունի Պլազա» ՍՊԸ**<br>ք.Երևան, Վ. Սարգսյան 26/1<br>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 220410125490000<br>ՀՎՀՀ 02580003 | **ՀՀ ՏԶՆՆ Պետական գույքի կառավարման կոմիտե**<br>ք.Երևան, Տիգրան Մեծի 4<br>ՀՀ ՖՆ աշխ. գործառն. վարչություն<br>Հ/Հ 900011145027<br>ՀՎՀՀ 02528489 |
| **Լիազորված անձ**<br>**Վահրամ Մարտիրոսյան** | **Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար**<br>**Անի Օբոսյան** |
| ---------------------------------------<br>**(ստորագրություն)**<br>**Կ.Տ.** | ---------------------------------------<br>**(ստորագրություն)**<br>**Կ.Տ.** |

**Նոտարական ակտի կոդ:** 450-20180920-117-3024979
**Նոտարական ակտի գաղտնագիր:** 2YD9KJ

**«Էրեբունի Պլազա» ՍՊԸ-ի լիազ.անձ՝**

**ՎԱՀՐԱՄ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, ծնված՝ 25/08/1983թ-ին, ՀԾՀ՝ 3508830047, անձնագիր՝ 001256049, տրված՝ 054-ի կողմից, 09/04/2014թ-ին, բնակության հասցե՝ ԱՐԱԳԱԾՈՏՆ, ԹԱԼԻՆ, Մ. ՔՈԹԱՆՅԱՆ Փ., 11 Շ, 44ԲՆ**

**ՀՀ լիազ.անձ՝**

**ՀՐԱՉՅԱ ՄՈՒՇԵՂԻ ՕՀԱՆՅԱՆ, ծնված՝ 29/11/1979թ-ին, ՀԾՀ՝ 3911790023, անձնագիր՝ 000006197, տրված՝ 010-ի կողմից, 25/06/2012թ-ին, բնակության հասցե՝ ԵՐԵՎԱՆ, ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ, ՆՈՐՔ 4 Փ., 13 Տ**

Երկու հազար տասնութ թվականի սեպտեմբերի քսանին

Սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Երևան նոտարական տարածքի նոտար՝ Սուսաննա Դանիելյանիս կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ, կողմերի ինքնությունը, գործունակությունը իրավաբանական անձի իրավունակությունը, նրա ներկայացուցչի լիազորությունները ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում թիվ 6865

Գանձված է պետական տուրք՝ երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Սուսաննա Հենրիկի Դանիելյան